ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 17 (626)
25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024Թ.

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ISSN 1829-3468

Գորիսի պետական քոլեջը 100 տարեկան է



«ԱԿՆԿԻՑ ԵՐ ԶԱՆՆ, ԵՎ ԶԱՆՆ ԱՍՏՈՒՑՈՅ ՍՈՏ ԵՐ, ԵՎ ԶԱՆՆ ԱՍՏՈՒԱԾ ԵՐ»

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆՈՒ, ԳԼՈՒԽ Ա, 1-ՐԴ ԽՈՍՔ

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ, ԴՐՎԱԳ «ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ» ԳՈԲԵԼԵՆԻՑ

Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը, ընկալել խօսքի բարդ դարձուածքները, հասկանալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը՝ պարզամիտներին խորագիտութիւն եւ երիտասարդներին միտք ու հանճար տալու համար, որպէսզի, դրանք լսելով, իմաստունն աւելի իմաստուն լինի, իսկ հանճարեղը առաջնորդութիւն ստանայ, թափանցի առակների եւ խորին ասոյթների մէջ, իմաստունների ճառերի եւ նրանց այլաբանութիւնների մէջ:

Մեսրոպ Մաշտոց

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՕՐՀՆԵՐԳԸ

Վաղնջական հայ դպրության
Դու նորօրյա մեր մի ջա՛հն ես,
Դու Գորիսի ուսումնական
Ամենահին մի օջախն ես...

Դու աշխարհին շա՜տ անանման
Կերպարներ ես մատուցանել,
Քո սաները՝ նվիրական,
Մեծ դեմքեր են կյանքում դարձել...

Դու մարդկային ոգի թրծող
Մեր հայահո՜ւնչ դարբնոցն ես,
Սերունդներին կյանք ուղեկցող
Մաշտոցաշունչ մեր հնո՛ցն ես...

Թող ընթա՛ցքդ հավերժ լինի,
Դու՝ փառապանծ մեր սո՜ւրբ օրրան,
Ուսման կարոտ սերունդների
Դու՝ Նաիրյան մեր օրորան...

Խոսք՝
ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Երաժշտություն՝
ԱՆՈՒՇ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Առաջին կատարումը՝
ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ
ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ

Սիրելի՛ ուսանողներ, դասախոսներ, նախկին շրջանավարտներ,
Գորիսի պետական քոլեջը նշում է հիմնադրման 100-ամյակը՝ շարունակելով սերունդների համար մասնագիտական կրթության ապահովման գործունեությունը: Քոլեջը մեկդարյա գործունեության ընթացքում մասնագետներ է ապահովել Սյունիքի ու Վայոց ձորի, ինչպես և Լեռնային Ղարաբաղի համար:
Դիմակայելով ժամանակի մարտահրավերներին՝ 100-ամյա կրթօջախը, շարունակում է պահպանել իր ինքնատիպությունը՝ մնայուն տեղ զբաղեցնելով հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շարքում:
Պետությունն այսօր կրթության համակարգում մեծածավալ բարեփոխումներ է իրականացնում, այդ թվում՝ միջին մասնագիտական կրթության ոլորտում: Բազմաթիվ ծրագրեր ուղղված են կրթական այս մակարդակի գրավչության բարձրացմանը, որակի ապահովմանը, կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը, ուսումնական հատատություն-գործատու համագործակցության ամրապնդմանը:
Վստահ եմ՝ նոր մոտեցումները, ներդրվող ծրագրերը Գորիսի պետական քոլեջում ևս կապահովեն շոշափելի զարգացում՝ նոր մակարդակի բերելով թե՛ տրամադրվող կրթությունը, թե՛ շրջանավարտների՝ աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու հնարավորությունը:
Գորիսի պետական քոլեջի անձնակազմին, մանկավարժներին ու ուսանողներին մաղթում եմ բարի ընթացք, առաքելության վերածված ազգանվեր մասնագիտական գործը շարունակելու կամք, ստեղծագործ եռանդ և դեպի զարգացում տանող նորարարություններ:

ԿԱՐԵՆ ԼԱՉԱՐՅԱՆ
Գորիսի պետական քոլեջի տնօրեն

Գորիսի պետական քոլեջի 100-ամյակի մասին խոսելիս իմ մտքերում նախևառաջ հառնում է այն մանկավարժների, դասախոսների լուսավոր կերպարը, ովքեր իրենց նվիրական աշխատանքով կերտել են կրթօջախի մեկդարյա փառավոր ուղին:
Հարգանք նրանց հիշատակին, ովքեր չկան:
Հարգանք բոլոր նրանց, ովքեր կան և կողքից կամ հեռվից շարունակում են ապրել սիրելի կրթօջախի ներկայով:
Երախտագիտության խոսք եմ ուղղում քոլեջի դասախոսական անձնակազմին, ուսումնաօժանդակ աշխատողներին:
Շատ-շատ հարցերում ողջամիտ տարաձայնություններ ունենալով հանդերձ, ինչը բնական է, մենք միասնական և համախումբ ենք եղել ու կանք բոլոր այն հարցերում, որոնք առնչվել և առնչվում են ուսանողների կրթության որակին, դաստիարակության խնդիրներին:
Հենց այդ միասնության շնորհիվ ենք հաղթահարել բոլոր այն դժվարությունները, որ ծառացել են քոլեջի առջև:
Իմ շնորհակալությունն եմ հղում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ու հատկապես նախարարության այն պատասխանատուներին, ովքեր զբաղվում են միջին մասնագիտական և նախնական արհեստագործական կրթության հարցերով: Բազմաթիվ օրինակներ ունենք, թե ինչպիսի սրտացավությամբ և խնդիրների խորն իմացությամբ են արձագանքել նրանք՝ մեր բարձրացրած հարցերին:
Գնահատանքի արժանի են նախարարության ձեռնարկումները՝ միտված ոլորտին առնչվող օրենսդրական փոփոխություններին, ինչի շնորհիվ բազմաթիվ հարցեր են լուծվել և լուծվում՝ ի շահ ուսանողի և դասախոսի:
Եվ, իհարկե, շնորհակալություն բոլոր այն անձանց և կազմակերպություններին, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններին, ովքեր գիտակցելով Գորիսի պետական քոլեջի դերն ու նշանակությունը տարածաշրջանում՝ արել և անում են հնարավորը՝ մեր

ՍԻՍԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

Շնորհավորում եմ Գորիսի պետական քոլեջի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ուսանողներին և բոլոր շրջանավարտներին՝ քոլեջի հիմնադրման 100-ամյակի առթիվ:
Սյունիքի տարածաշրջանն իրավամբ կարող է հպարտանալ քոլեջի փառավոր պատմությամբ և ձեռքբերումներով, որը բոլոր ժամանակներում հավատարիմ է եղել իր որդեգրած առաքելությանը:
Գոյության տարիների ընթացքում քոլեջը՝ ստեղծած լավագույն ավանդույթների, կրթական ու մասնագիտական գործում ունեցած ձեռքբերումների շնորհիվ իր անուրանալի տեղն ու դերն է ունեցել Սյունիքի մարզում՝ կրթության և մշակույթի զարգացման գործում, պատրաստել բազմաթիվ բարձր որակավորում ունեցող մասնագետներ տարբեր բնագավառների համար:
Ստեղծագործ որոնումների, ամենօրյա համառ աշխատանքի, ավանդույթների նկատմամբ հարգանքի և նորարարական նախագծերի շնորհիվ քոլեջը վստահորեն քայլում է ժամանակի հետ՝ ներկայումս հանդիսանալով կարևոր կրթական հաստատություն:
Վստահ եմ՝ Գորիսի պետական քոլեջը կշարունակի մնալ տաղանդավոր, նախաձեռնող և նպատակասլաց երիտասարդների գրավչության կենտրոն:
Քոլեջի ողջ անձնակազմին մաղթում եմ ուսումնական և ստեղծագործական բեղուն գործունեություն, նորանոր ձեռքբերումներ և հետագա բարեկեցություն: Թող որ Գորիսի պետական քոլեջը տոնի մեկ հարյուրամյակից ավելին: Հոբելյանական տոնի առթիվ ընդունեք իմ անկեղծ բարեմաղթանքները:

կրթօջախին մտահոգող խնդիրները լուծելու համար:
Խոսել քոլեջի 100-ամյակի մասին՝ հնարավոր չէ չհպարտանալ այն փառավոր ճանապարհով, որ անցել է մեր կրթական հաստատությունը:
Սակայն առավել շատ հպարտանալու տեղիք է տալիս այն իրողությունը, երբ հանրակրթական դպրոցի շրջանավարտն իր վաղվա համար, իր ապագայի համար նախապատվությունը տալիս է Գորիսի պետական քոլեջում սովորելուն:
Հպարտանալու զգացում է առաջացնում նաև այն իրողությունը, երբ քոլեջի շրջանավարտին տեսնում եմ բուհերում սովորելիս, տեսնում եմ մեր կյանքի որևէ ոլորտում աշխատելիս ու գործատուի կողմից հարգանք վայելելիս:
Իսկ դա նշանակում է, որ մենք ճիշտ ճանապարհի վրա ենք:
Մեր ներկա և հետագա գործունեության համար չափազանց կարևոր եմ համարում ընթացիկ պահի խնդիրների, մարտահրավերների ճիշտ և ողջամիտ գիտակցումը, դրանից բխող քայլերի ձեռնարկումը:
Այդ տեսակետից շատ կարևոր է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին ժամանակին արձագանքելը, հարկ եղած դեպքում նոր մասնագիտությունների ուսուցման կազմակերպումը:
Կարևոր է ուսուցման որակի հետագա բարելավումը, ուսուցման տեխնիկական բաղադրիչի արդիականացումը և դասախոսական անձնակազմի պրոֆեսիոնալիզմի բարձրացումը:
Կարևոր է մեր կողմից որդեգրված ուսանողակենտրոն սկզբունքի և ուսանողների ինքնավարության հետագա զարգացումը:

* * *

Խոսելով քոլեջի 100-ամյակի մասին՝ իմ շնորհավորանքն եմ հղում նաև նախորդ բոլոր տարիների շրջանավարտներին, ուսանողների ծնողներին, պետական և հասարակական այն հաստատություններին, որոնց հետ համագործակցում ենք ու որոնց հետ նորանոր ծրագրեր ենք կազմում մեր հետագա ընթացքի համար:
Շնորհավորանք եմ հղում Գորիս քաղաքի և տարածաշրջանի բոլոր գյուղերի բնակիչներին, Գորիսի համայնքային իշխանությանը, որովհետև մեկդարյա ճանապարհն անցել ենք Գորիսի և գորիսեցու սիրո ու գուրգուրանքի շնորհիվ: Այնպես որ՝ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այս հոբելյանը նախևառաջ տոն է Գորիսի ու գորիսեցու համար:
Ուրեմն և՝ շնորհավոր տոնդ՝ Գորիս, շնորհավոր տոնդ՝ Սյունիք, շնորհավոր հոբելյանդ՝ Գորիսի պետական քոլեջ:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹՈՎ

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Գորիսի համայնքի ղեկավար

Հարգելի հայրենակիցներ

Գորիսի մանկավարժական քոլեջի հիմնադրման 100-ամյակը նշանակալի իրադարձություն է մեր համայնքի և ողջ տարածաշրջանի կրթական կյանքում: Այդ հաստատությունը դարձել է կրթության և գիտելիքի կարևոր օջախ, որի ռազմավարական նշանակությունը տարածաշրջանի զարգացման համար անժխտելի է: Քոլեջի առանցքային առաքելությունը՝ տեղում որակյալ մասնագետներ պատրաստելը, եղել և մնում է համայնքի կայուն զարգացման հիմնաքարերից մեկը: Տեղական կադրերի պատրաստումը և նրանց համայնքում պահելն ունի հիմնարար նշանակություն: Այս մոտեցումը նպաստում է մարդկային ռեսուրսների պահպանմանն ու զարգացմանը, ապահովում է համայնքի կարիքներին համապատասխան մասնագետների առկայությունը և նվազեցնում արտագաղթը: Քոլեջի շրջանավարտները տարիների ընթացքում համալրել են համայնքի կրթական, առողջապահական և այլ կարևոր ոլորտների աշխատակազմը: Նրանք ոչ միայն որակյալ մասնագետներ են: Գորիսի մանկավարժական քոլեջի հարյուրամյա գործունեությունը վկայում է, որ կրթական հաստատությունը կարող է դառնալ տարածաշրջանային զարգացման շարժիչ ուժ: Այս հոբելյանը ոչ միայն անցյալի ձեռքբերումների գնահատում է, այլև ապագայի մարտահրավերներին դիմակայելու հանձնառության վերահաստատում: Գորիսի մանկավարժական քոլեջը պետք է շարունակի գործունեությունը՝ կրթելով նոր սերունդներին, ամրապնդելով համայնքը և նպաստելով երկրի զարգացմանը: Հաջորդ հարյուրամյակում ևս քոլեջը պետք է պահպանի իր կենսական դերը տարածաշրջանի զարգացման գործում:

Այս նշանակալի տոնի առթիվ ջերմորեն շնորհավորում եմ քոլեջի տնօրինությանը, ողջ կոլեկտիվին և ուսանողներին: Հատկապես ցանկանում եմ ընդգծել, որ այսօր քոլեջը գտնվում է ապահով ձեռքերում: Տնօրեն Կարեն Լազարյանի ավանդը քոլեջի զարգացման գործում նկատելի է և գնահատելի: Նրա ջանքերի շնորհիվ քոլեջը շարունակում է պահպանել բարձր որակը և հարմարվել ժամանակակից պահանջներին: Մաղթում եմ նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ Գորիսի մանկավարժական քոլեջին:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՆԻ ՍՈՒԹՈՎ

ԴԱՎԻԹ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՀՀ ԱԺ պատգամավոր

Սիրելի այունեցիներ
Շնորհավորում եմ բոլորիս՝ Գորիսի պետական քոլեջի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ:
Քոլեջի այս մեկդարյա ճանապարհն ունի հարուստ կրթական պատմություն, որի շնորհիվ այն յուրօրինակ նշանակություն ունի ոչ միայն Սյունիքի, այլև ողջ Հայաստանի կրթական ու մշակութային միջավայրում:
Տարիների փորձությունները և ժամանակի մարտահրավերները չեն փոխել կրթօջախի դիմագիծը՝ պահպանելով պետության համար կարևոր նշանակություն ունեցող յուրահատուկ մասնագիտությունների հարուստ ավանդույթները և առանձնահատկությունները: Այստեղ կարևոր եմ համարում առանձնացնել կառավարության կողմից կրթաթոշակներ սահմանված երկու մասնագիտությունները՝ **«Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» և «Մետաղների մշակման տեխնոլոգիա, համապատասխանաբար «հյուսն» և «դարբին» որակավորմամբ»:** Պահպանելով լավագույն ավանդույթները՝ մենք դառնում ենք պատմության մի մասը: Այս ավանդույթներն անգին են և գանձ են մեր մշակույթի համար:
Գորիսի պետական քոլեջի հարգելի անձնակազմ, մաղթում եմ ուժ, կորով և ստեղծագործական մեծ առաջընթաց:
Ամուր եղեք, ստեղծագործեք, կրթեք և ծաղկեցրեք մեր տարածաշրջանը:
Դուք մեծ առաքելություն ունեք, քանի որ մեր և գալիք սերունդների սպասումները շատ են:

ՏԵՐ ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Հարգելի Կարեն Լազարյան, քոլեջի սիրելի աշխատակիցներ և ուսանողներ
Անվերապահ սիրով և օրհնությամբ դիմում եմ ձեզ՝ Գորիսի պետական քոլեջի հիմնադրման 100-ամյակի առթիվ: Այս մեծարելի առիթը հնարավորություն է տալիս խորհելու ձեր կրթօջախի ուղենիշի, նրա որդեգրած արժեքների և անչափ կարևոր ծառայության մասին՝ ի բարօրություն մեր ժողովրդի և հայրենիքի:
Աստծո օրհնությամբ դարերի ճանապարհ անցած կրթական այս հաստատությունը, անշեղորեն հավատարիմ իր կոչմանը, կրթել ու դաստիարակել է սերունդներ, որոնք իրենց բարի գործով և շնորհալի վարքով ծառայել են Աստծուն և ազգին:
Ձեր կրթօջախի պատերից դուրս եկած այն բազմահազար անհատները, ովքեր նշանակալի ներդրում են ունեցել գիտական, մանկավարժական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում, իրենց գործերով վկայում են կրթագիտական այն մեծ ժառանգության մասին, որ դուք կերտել և փոխանցել եք սերունդներին:
Այսօր, երբ կանգնած եք ձեր հաստատության մեկդարյա հոբելյանի շեմին, համոզված եմ, որ Աստծո կամքը և ձեր ամենօրյա գործով, Գորիսի պետական քոլեջը շարունակելու է իր աստվածահաճո առաքելությունը՝ ամրապնդելով և զարգացնելով այն ավանդույթները, որոնք ձևավորվել են տարիների ընթացքում:
Առ ի գնահատումն անմնացորդ ծառայության՝ ջերմապես աղոթում եմ, որ Տերը զորացնի ձեզ, պարգևի առողջություն և ուժ՝ ձեր կրթօջախի գործունեությունը շարունակելու համար՝ ի փառս մեր հայրենիքի:
Աստված օրհնի ձեզ և ձեր բոլոր աշխատանքները:

ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ
Գորիսի պետական քոլեջի կառավարման խորհրդի նախագահ

Տասը և ավելի տարիներ Գորիսի պետական քոլեջի կառավարման խորհրդի նախագահն եմ:
Ու, դրանով պայմանավորված, եղել եմ ու կամ քոլեջի վերջին տարիների ընթացքի եւ ականատեսը, եւ մասնակիցը, եւ (ինչ-որ առումով) պատասխանատուներից մեկը:
Նախ՝ միշտ զգացել եմ պատմական այն առաքելությունը, որ ունի քոլեջը: Իսկ այդ առաքելությունը սկիզբ է առնում նախորդ դարի 20-30-ական թվականներից ու շարունակվում մինչև հիմա:
Տևական ժամանակ այս հաստատությունը կադրերի պատրաստման դարբնոց էր ոչ միայն Սյունիքի, այլև Վայոց ձորի ու Արցախի համար: Ուսումնարանի հարյուրավոր, եթե ոչ հազարավոր շրջանավարտներ ընդգրկվում էին այդ տարածաշրջանների կրթական, տնտեսական գործի կազմակերպման մեջ, կառավարման համակարգում:
Այնուհետև, բազմաթիվ շրջանավարտներ՝ այստեղ ստացած գիտելիքներով, շարունակել են իրենց կրթությունը հանրապետության տարբեր բուհերում և հետագայում դարձել ճանաչված դեմքեր ազգի մասշտաբով՝ հայ արձակի մեծ վարպետ Սերո Խանզադյանից մինչև գիտությունների ակադեմիայի բազմաթիվ անդամներ, որոնց անունը, գիտական ժառանգությունն այսօր էլ հպարտություն են բերում հայ ժողովրդին:
Իսկ վերջին տասը տարում... Ես տեսել եմ, թե ինչ ջանքեր են գործադրում քոլեջի տնօրենությունը, դասախոսական անձնակազմը՝ տասնամյակներով կերտած այդ փառավոր ժառանգության արժանավոր շարունակողը լինելու համար: Եվ դա հաջողվել ու հաջողվում է:
Ես տեսել և տեսնում եմ, որ քոլեջը շարունակում է պահանջված կրթօջախ մնալ մեր տարածաշրջանի հանրակրթական դպրոցների հարյուրավոր շրջանավարտների համար:
Ես տեսնում եմ, թե տարածաշրջանի աշխատաշուկայում որքան պահանջված են Գորիսի պետական քոլեջի շրջանավարտները:
Ի սրտե շնորհավորում եմ Գորիսի պետական քոլեջի դասախոսական և ուսանողական անձնակազմին՝ կրթօջախի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ: Մաղթում եմ, որ այսուհետ նույնպես կրթօջախն ունենա իր դեմքն ու դիմագիծը ոչ միայն Սյունիքի, այլև ամբողջ հանրապետության կրթական համակարգում:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Կրթօջախի 91-ամյա շրջանավարտ Օլյա Գալստյանը քոլեջի 100-ամյակին մեզ հետ է՝ իր օրհնանքով ու բարեմաղթանքով

Օլյա Սահակի Գալստյան ծնվել է 1933թ. փետրվարի 3-ին՝ Գորիսի շրջանի Հարժիս գյուղում: 1934 թ. ընտանիքով տեղափոխվել են Գորիս: Սովորել է Գորիսի յոթնամյա դպրոցում: 1947-48 ուստարում սովորել է Գորիսի մանկավարժական տեխնիկումում, բայց ուսումը կիսատ է մնացել՝ ընտանիքն Ալթայի երկրամաս տեղափոխվելու պատճառով: 1953 թ. վերադարձել են Գորիս, և ուսումը շարունակել է մանկավարժական տեխնիկումում:
Սովորելու ընթացքում աշխատել է տեխնիկումին կից բազային դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար: Հետագայում աշխատել է տարրական դասարանների դասվար: Աշխատել է մինչև 1991թ.:
Պարգևատրվել է ՀՀ Գերագույն խորհրդի, ՀԱՄԼԿԵՄ կենտկոմի պատվոգրերով:

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քոլեջի տնօրենները

Արսեն Առաքելյան
Հմայակ Թարախչյան
Հովհաննես Հայրապետյան
Բագրատ Ներսիսյան
Երվանդ Մինասյան
Սաղաթել Քիշոյան
Սերոբ Բարխուդարյան
Ասյա Ծատրյան
Ագնեսա Դարբինյան
Կարեն Լազարյան

Հ.Գ. Տնօրեններից ոչ բոլորի լուսանկարը կարողացանք գտնել

Անդրանիկ Բուդաղյան

Դրաստամատ Օհանյան

Ագնեսա Դարբինյան

Սերոբ Բարխուդարյան



Սաղաթել Քիշոյան

Ասյա Ծատրյան

Կարեն Լազարյան

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Գորիսի պետական քոլեջի նշանավոր շրջանավարտները



ՍԵՐՈ ՆԻԿՈԼԱՅԻ ԽԱՆՋԱՂՅԱՆ
Արձակագիր



ՍՈՒՐԵՆ ԲԱԽՇԻԻ ԱՅՎԱՋՅԱՆ
Արձակագիր

ՉԱՔԱՐ ԱՎԱԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ և ՌԴ վաստակավոր նկարիչ

ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԳԵՍԻ ԱԹՈՅԱՆ
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱ ակադեմիկոս



ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԽՇԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Աշխարհագրագետ, կլիմայագետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից–անդամ

ՎԱՀԱՆ ՅՈՎՍԵՓԻ ՂԱՋԱՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

ԱՇՈՏ ԱՍԱՏՈՒՐԻ ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ
Քիթկոկորդականջաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԵՐԳԵՅ ՍՈՒԼԹԱՆԻ ԱՄԻՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՂԴԱՍԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



ԱԲԵԼ ՊՈՂՈՍԻ ՍԻՄՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳԱԲՐԻԵԼ ՍԱՄՍՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻՄՈՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՔԱՋԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՕՀԱՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Շրջանավարտներ, ովքեր անուրանալի դերակատարություն ունեցան Գորիսի տարածաշրջանում և ընդհանրապես հանրապետությունում՝ գիտության, տնտեսության, մշակույթի, մանկավարժության ոլորտներում

- Ադամյան Գուրգեն, մանկավարժ (Ակներ)
- Ադամյան Ադամ, մանկավարժ (Հարժիս)
- Առաքելյան Գարեգին, կուսակցական և պետական գործիչ (Քարաշեն)
- Ալեքսանյան Անուշ, երգահան (Գորիս)
- Ալեքսանյան Յաշա, մանկավարժ, պատմաբան, բանասեր (Քարահունջ)
- Ալեքսանյան Վլադիմիր, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, փոխգնդապետ (Տեղ)
- Ալեքսանյան Կառլեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (Տեղ)
- Ալումյան Սմբատ, ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ (Խնձորեսկ)
- Ադունց Անդրանիկ, բանաստեղծ, արձակագիր, մանկավարժ (Գորիս)
- Աղաբեկյան Անդրանիկ (գրական կեղծանունը՝ Ռաստի), բանաստեղծ և լրագրող (Ազատաշեն)
- Աղաջանյան Հրանտ, գնդապետ (Մաղանջուղ)
- Բաբայան Գուրգեն, բանաստեղծ (Գորիս)
- Բարխուդարյան Սերոբ, գրող, բանաստեղծ, ՀԽՍՀ վաստակավոր մանկավարժ (Գորիս)
- Բեգլարյան Լևիկ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (Գորիս)
- Բաղդասարյան Հովսեփ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր (Հալիձոր)
- Բաբայան Գրավիկ, մանակավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՌԴ հումանիտար գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ (Քարաշեն)
- Բազունց Բաբկեն, բժիշկ (Խնձորեսկ)
- Բուդաղյան Անդրանիկ, Հայաստանի վաստակավոր ուսուցիչ, կուսակցական և պետական գործիչ (Խնձորեսկ)
- Գյագունց Ղևոնդ, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ (Տեղ)
- Գրիգորյան Արտաշես, պատմաբան, մանկավարժ (Տեղ)
- Գրիգորյան Աշոտ, մանկավարժ, կուսակցական և պետական աշխատող (Խոտ)
- Գրիգորյան Հայրապետ, կուսակցական և պետական գործիչ, մանկավարժ (Խնձորեսկ)
- Գևունց (Գևորգյան) Գրիգոր, մանկավարժ, գրող-երգիծաբան (Քարահունջ)
- Դադալյան Գուրգեն, մանկավարժ և տնտեսական գործիչ (Գորիս)
- Դավթյան Գուրգեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (Տեղ)
- Դավթյան Յուրի, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու (Քարահունջ)
- Թելունց Ռոզա, մանկավարժ (Գորիս)
- Թունյան Ալբերտ, լրագրող (Քարահունջ)
- Իսախանյան Դավիթ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ վաստակավոր երկրաբան (Տեղ)
- Խաչատրյան Արմենակ, պետական և կուսակցական գործիչ (Տեղ)
- Խաչատրյան Հովհաննես (Մանուչ), զինվորական և պետական գործիչ, Բելառուսի պարտիզանական շարժման առաջնորդներից (Տեղ)
- Ծատրյան Ասյա, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ, կուսակցական և պետական գործիչ (Խնձորեսկ)
- Հայրապետյան Ալեքսանդր, արձակագիր (Գորիս)
- Հայրապետյան Նորա, ՀԽՍՀ վաստակավոր մանկավարժ (Գորիս)

ՄԻ ՔԱՆԻՍԸ՝ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՑ



Գուսան Աշոտ (Աշոտ Դադալյան)
Արտավազդ Յոլյան
Վալերի Գասպարյան
Բենիկ Յուզբաշյան
Ռոբերտ Ղազարյան
Վարսենիկ Մինասյան
Աստղիկ Տեր-Մինասյան
Մուշեղ Մարության
Զաքար Խոջաբաղյան
Օլյա Գիչունց
Շողերա Պետրոսյան
Նինա Հովսեփյան
Ժենյա Բաղդասարյան
Գագիկ Հակոբջանյան
Արշակ Դավթյան
Ալվարդ Ավետիսյան



ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՄԱՆՈՒՉ) ԽԱՉԱՏՐՅԱՆ
Պարտիզանական 61-րդ ջոկատի, պարտիզանական 5-րդ բրիգադի, ապա Չապաևի անվան 620-րդ գնդի կոմիսար, Բելառուսի պատվավոր քաղաքացի



ԱՐՄԵՆԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար 1947-1952թթ. և 1957-1961թթ., Սիսիանի կուսշրջկոմի 1-ին քարտուղար 1961-1962թթ.

ՖԵՐԴԻՆԱՆԴ ՂԱՋԱՐՅԱՆ
Ջերմուկի քաղխորհրդի գործկոմի նախագահ 1985-1991թթ.

ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար 1974-1982թթ.

- Հայրապետյան Թամարա, մանկավարժ և լրագրող (Կորնիձոր)
- Հայրումյան Երվանդ, մանկավարժ (Վերիշեն)
- Հասրաթյան Արշալույս, կուսակցական և տնտեսական գործիչ (Գորիս)
- Հարությունյան Արամ, կուսակցական և պետական գործիչ (Տաթև)
- Հովհաննիսյան Խիկար, գնդապետ (Շինուհայր)
- Հովսեփյան Շողեր, Հայաստանի վաստակավոր ուսուցիչ (Խնածախ)
- Ղազարյան Ֆերդինանդ, կուսակցական և պետական գործիչ (Ազատեկ, Վայքի շրջան)
- Ղազարյան Վաղարշակ, տնտեսական գործիչ (Հարժիս)
- Ղարագյոզյան Լազար, բժշկական գիտությունների թեկնածու (Խնձորեսկ)
- Մանուչարյան Գրիշա, մանկավարժ և բանաստեղծ (Կյորու)
- Մանվելյան Հակոբ, մանկավարժ, լրագրող (Խնձորեսկ)
- Մեժլումյան Գառնիկ, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, (Գորիս)
- Միրաքյան Արծրունի (Զոնիկ), ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ (Գորիս)
- Մկրտչյան Գառնիկ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու (Գորիս)
- Շահնազարյան Աշխեն, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ (Խնձորեսկ)
- Շեգունց Արշակ, մանկավարժ (Տեղ)
- Պողոսյան Պողոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (Տաթև)
- Ջահանգիրյան Լենո, մանկավարժ, տնտեսական գործիչ (Տեղ)
- Սահակյան Գևորգ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (Տեղ)
- Սարգսյան Արամայիս, մանկավարժ, լրագրող (Խոտ)
- Սարգսյան Ռիմա, քիմիկոս, քիմիական գիտությունների թեկնածու (Վերիշեն)
- Ստեփանյան Լազր, մանկավարժ (Շինուհայր)
- Վարդանյան Սուրեն Ա., մանկավարժ (Տեղ)
- Վարդանյան Գևորգ, մանկավարժ (Հարժիս)
- Օհանյան Դրաստամատ, մանկավարժ (Հարժիս)

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմում են լուսանկարները

1933-34 ուսումնական տարի

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմում են լուսանկարները

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմում են լուսանկարները

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Եվս երեք հիշարժան դրվագ

Գորիսի մանկավարժական տեխնիկումը սկզբնապես գործել է Գորիսի՝ Լուկաշինի անունը կրող մշակույթի պալատում, որը կառուցվել է 1912 թ. արքեպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսիսյանի (Մեսրոպ Մագիստրոսի) կողմից: Շենքը քանդվել է 1968-ի երկրաշարժից հետո, այդ տեղում հիմա «Գորիս» հյուրանոցն է:

1940-50-ական թթ. Գորիսի մանկավարժական տեխնիկումը գործել է խնձորեսկցի Փանդուց Լալազարի (Հովակիմ Լալազարյանի)՝ Գորիսում կառուցած շենքերից մեկում: Խոսքն այն մեծահարուստ գորիսեցու մասին է, ով 1898 թ. Որոտան գետի վրա կառուցել է հայտնի՝ Լալազարի կամուրջը:

27 ապրիլի 1989 թ., Տաթևի վանք: Գորիսի մանկավարժական ուսումնարանի երգչախումբը Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ:

Գորիսի մանկավարժական ուսումնարանի երգչախումբը, գեղարվեստական ղեկավար՝ Վալերի Գասպարյան

Գորիսի՝ Լուկաշինի անունը կրող մշակույթի պալատը

Վազգեն Ա-ն և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն Տաթևի վանքում, որտեղ էլ հանդիպել են Գորիսի մանկավարժական ուսումնարանի ուսանողների հետ և լուսանկարահանվել (27 ապրիլի 1989թ.)

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Տեղեկություններ արխիվից



ՀՍՍՌ Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի Գորիսի մանկավարժական տեխնիկումը հիմնադրվել է 1924/25 ուսումնական տարում: Այն մանկավարժական կադրեր է պատրաստել տարրական դասարաններում և նախադպրոցական հիմնարկներում աշխատելու համար:

Տեխնիկումն ունեցել է կառուցվածքային երեք ստորաբաժանում:

1. Ընդհանուր բաժին,
2. Ուսումնական մաս,
3. Հաշվապահություն:

Տեխնիկումին կից գործել է բազային դպրոց, որտեղ սովորողներն անց են կացրել իրենց պրակտիկան:

1937 թ. մարտի 27-ին ՀՍՍՌ լուսավորության ժողկոմիսարիատի նո. 16 հրամանով տեխնիկումը վերանվանվում է ուսումնարանի և սկսում է կոչվել ՀՍՍՌ Լուսժողկոմիսարիատի Գորիսի մանկավարժական ուսումնարան:

1946 թ. մարտից, երբ ժողկոմատները վերանվանվում են մինիստրությունների, ուսումնարանը սկսում է կոչվել ՀՍՍՌ Լուսավորության մինիստրության Գորիսի մանկավարժական ուսումնարան:

Ուսումնարանի վավերագրական նյութերը նախկինում չեն կարգավորվել: Ներկա կարգավորումն առաջինն է և ընդգրկում է 1832-1958 թթ.: Դա բացատրվում է նրանով, որ մինչև 1932 թ. պահպանված չէ ոչ մի փաստաթուղթ, իսկ 1932-ից սկսած պահպանվել է վավերագրական նյութերի մի մասը միայն (ուսումնական մասը՝ 1937-ից, ընդհանուր բաժինը՝ 1947 թվականից, իսկ հաշվապահությունը՝ 1948 թվականից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ
31 ՕԳՈՍՏՈՍԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ, ԹԻՎ 541

ԳՈՐԻՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԳՈՐԻՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՎԵՐԱԿԱՌՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Սյունիքի մարզի համար առավել բարձր որակավորմամբ մանկավարժական կադրերի պատրաստման անհրաժեշտությունից Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Ընդունել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության առաջարկությունը և Գորիսի մանկավարժական ուսումնարանը վերակազմավորել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Գորիսի մանկավարժական քոլեջի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1998 թվականի օգոստոսի 31-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ը ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Գորիսի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները և հիմք ընդունելով Գորիսի պետական մանկավարժական քոլեջի 2008 թ. հունիսի 31-ի մանկավարժական խորհրդի որոշումը և Գորիսի քաղաքապետի 2008 թ. հունիսի 2-ի N 02-20 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գորիսի պետական մանկավարժական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գորիսի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության:

Ս. ՍԵՅՐԱՆՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քոլեջի մասնակցությունը Մեծ հայրենականին և Արցախյան հերոսամարտերին

1941թ. սկսված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին լծվեց Խորհրդային Միության ողջ հասարակությունը: Պատերազմին մասնակցություն բերեցին Գորիսի մանկավարժական ուսումնարանի այդ ժամանակվա և նախկին ուսանողները, ովքեր իրենց անունները փառքով պսակեցին պատերազմի ողջ ընթացքում:

Մանկավարժական ուսումնարանի սաները մարտնչում էին ռազմաճակատի տարբեր ճակատներում՝ կատարելով տարբեր խնդիրներ ու առաջադրանքներ:

Նրանք ամենուր էին՝ թե թիկունքում, թե ռազմաճակատում՝ համեստ նպաստ բերելով պատերազմի հաղթանակին:

Գորիսի մանկավարժական ուսումնարանի 1938-1939 ուստարվա շրջանավարտ Լորիկ Սարգսի Սարգսյանն օկուպացված Ղրիմում օգնություն էր ցուցաբերում պարտիզաններին, թաքցնում և խնամում վիրավոր զինվորներին:

Ֆաշիզմի դեմ պայքարում իրենց մահկանացուն կնքեցին մանկավարժական ուսումնարանի շատ սաներ՝ Բախշի Հայրապետի Հովհաննիսյանը (Քարահունջ), Արվանդ Աղալարի Վարդազարյանը (Քարաշեն), Արտաշես Դադաշի Պետրոսյանը (Հարթաշեն), Միսաք Մելիքսեթի Մկրտչյանը (Այգեձոր), Խաչատուր Գրիգորի Սիմոնյանը (Խոտ), Արամայիս Հովսեփի Բաղդասարյանը (Քարաշեն), Լևոն Ավետիսի Պետրոսյանը (Գորիս), Համբարձում Սարգսի Խաչատրյանը (Սիսիանի շրջանի Լոր գյուղ):

Պատերազմի մասնակից, գրական առաջին փորձերն անող բանաստեղծ Ռուբեն Տիգրանի Միրզոյանը (Խնձորեսկ) մայրիկին գրած նամակում հավաստիացրեց. «Սիրելի՛ մայրիկ, թշնամին ուժեղ է, սակայն հավատացած եղիր՝ մենք կհաղթենք, ու ես տուն կվերադառնամ հաղթանակած»: Չվերադարձավ, բայց հաղթեց:

Մանկավարժական ուսումնարանի սան Անդրանիկ Հայրապետի Մկրտչյանը (Խոտ) մարտական ուղին կերտեց Հյուսիսային Կովկասում:

Մանկավարժական ուսումնարանի սան, պատմական գիտությունների դոկտոր Բաղդասար Հայրապետի Լալաբեկյանը (Տեղ) Հայրենական մեծ պատերազմում ծանր վիրավորվելուց հետո 1943թ. մայիսին զորացրվեց:

Հայ մեծ գրող Ակսել Բակունցի զարմիկ Եգոր Գուրգենի Ադամյանը (Ակներ) պարգևատրվեց երեք շքանշանով և 13 մեդալով:

Մանկավարժական ուսումնարանի շրջանավարտ Հակոբ Ռուբենի Մանվելյանը պարգևատրվեց Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով:

Կերչի թեժ մարտերին մասնակցելուց և վիրավորում ստանալուց հետո (1942թ.) զորացրվեց Արշակ Հովսեփի Շեգունցը (Տեղ):

1946թ. փոխգնդապետի կոչումով զորացրվեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աբել Պողոսի Սիմոնյանը (Խնձորեսկ):

Մանկավարժական ուսումնարանի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Լազր Մաթևոսի Գրիգորյանը (Հարժիս) 1940թ. զորակոչվեց բանակ: Ծառայել է Բելոռուսիայի Լոմժա քաղաքում: Նա պատերազմից չի վերադարձել և համարվում է անհետ կորած:

Մանկավարժական տեխնիկումի ուսանողներ Սեդրակ և Միսակ Նավասարդյան եղբայրները (Տաթև) բանակ են զորակոչվել 1940 թ.: Միսակը զոհվել է 1945թ. ապրիլի 12-ին և թաղված է Չեխոսլովակիայի Լանժգոտի եղբայրական գերեզմանատանը: Սեդրակը շարունակել է ծառայությունը, զորացրվել է 1946թ. փետրվարի 5-ին՝ մայորի կոչումով, վերադարձել է հայրենիք և աշխատել տարբեր զինվորական կոմիսարիատներում մինչև կյանքի վերջը:

Աստղիկ Սահակի Գալստյանը (Հարժիս) 1942 թ. դեկտեմբերի 12-ին՝ 36 կանանց հետ միասին կամավոր մեկնել է պատերազմ: Ծառայությունն անցել է 339-րդ զենիթահրետանային գնդի 133-րդ հրետանային բրիգադում՝ որպես հրահանգիչ և կոորդինատոր: 1945 թ. հոկտեմբերի վերջին զորացրվել է կրտսեր սերժանտի կոչումով և վերադարձել մանկավարժական գործունեության:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց դիմել Հայկական ԽՍՀ-ի, Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԽՍՀՄ գերագույն խորհուրդներին՝ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին:

Ադրբեջանի իշխանությունները բռնեցին արցախահայության արդարացի պահանջը խեղդելու ուղին:

Ադրբեջանական ագրեսիան ծրագրված էր: Այն սկզբնական շրջանում դրսևորվել է համապարփակ շրջափակման, պետական ու անհատական ունեցվածքների բռնագրավման, հակաօրինական բազմաթիվ գործողությունների տեսքով:

Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններին հետևեցին «Օղակ» («Կոլցո») օպերացիայի գործողությունը: Ապրիլի 30-ին ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության ներքին զորքերը և Ադրբեջանի օմոնականները սկսեցին լայնածավալ գործողություններ: Այդ

ՏԻԳՐԱՆ ԱՐԹՈՒՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ՖՐԻԿԻ ՄՈՒՐԱՂՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀՐԱՉԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

գործողության հիմնական նպատակն էր հայաթափել Լեռնային Ղարաբաղի Շահումյանի, Շուշիի, Մարտակերտի, Հադրութի շրջանները: Փաստորեն 1991 թ. մայիս-հունիս ամիսներին սկսվեց Արցախյան ազատագրական առաջին պատերազմը՝ 1991-1994 թթ.:

Արցախյան ազատագրական պատերազմում հայ ժողովուրդը կարողացավ տանել փայլուն հաղթանակներ՝ ի վերջո պատերազմը սանձազերծած Ադրբեջանին պարտադրելով կնքել հրադադար:

2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը՝ 25-ամյա զինադադարից հետո, հակառակորդի նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի զինված ուժերը սկսեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ, որը հետագայում կոչվեց Քառօրյա պատերազմ կամ Ապրիլյան պատերազմ: Առավել թեժ մարտեր են ընթացել ռազմաճակատի վերածված առաջնային գծի հարավային (Հադրութ) և հյուսիսարևելյան (Մարտակերտ) ուղղություններով: Ռազմական գործողությունները տևեցին մինչև ապրիլի 5-ի կեսօրը (ժամը 12.00-ի դրությամբ հաստատվել է հրադադար, դադարեցվել են ռազմական գործողությունները): Ապրիլյան քառօրյա պատերազմում հայկական կողմը 100-ից ավելի զոհ ունեցավ՝ ինչպես խաղաղ բնակչության, այնպես էլ ՀՈՒ շարքերում: Հակառակորդի վերահսկողությանն անցան Արցախի պաշտպանական գծի հյուսիսարևելյան և հարավային ուղղությամբ ադրբեջանական կողմը մի քանի հարյուր մետր առաջխաղացում ունեցավ:

2020թ. սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան ադրբեջանական ուժերը հարձակման անցան արցախաադրբեջանական սահմանի ողջ երկայնքով: Պատերազմի առաջին իսկ օրվանից պարզ դարձավ, որ այս հարձակումն աննախադեպ էր թե՛ սահմանների ընդգրկվածությամբ, թե՛ ռազմական տեխիկայի և թե՛ ուժերի ներգրավվածությամբ:

2020թ. նոյեմբերի 9-ի փաստաթղթով Ադրբեջանին անցավ Արցախի Հանրապետության մեծ մասը:

Գորիսի պետական քոլեջի դասախոսական և ուսանողական կազմն անմասն չմնաց Արցախյան պատերազմներին՝ իրենց մասնակցությունը ցուցաբերելով թե՛ մարտական գործողություններին, թե՛ թիկունքում:

Տնօրեն Կարեն Լազարյանը 44-օրյա պատերազմին, որպես կամավորական, մեկնեց Ջրական, որտեղ որպես դասակի հրամանատար կատարեց տարբեր առաջադրանքներ:

Քոլեջի զինղեկ Կամո Բեգլարյանն Արցախյան առաջին պատերազմում եղել է տանկային զորամասի կապի պետ (1993-1995թթ.):

2016 թ. քառօրյա պատերազմի ժամանակ, արդեն թոշակի անցած Կամո Բեգլարյանն Իշխանաձորում դաշտային հոսպիտալի թիկունքի պետ էր, իսկ 2020թ. պատերազմական գործողությունների ժամանակ N զորամասի հրամանատարի տեղակալ՝ կատարելով թիկունքային աշխատանքներ:

«Քույրական գործ» մասնագիտության ուսանող Վահագն Սահիլյանը քառօրյա պատերազմի ժամանակ մարտնչում էր Մատաղիսում:

Ջրականում 2016 թ. ապրիլի 2-ին վիրավորում է ստացել «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանող Սմբատ Ալեքսանյանը:

«Խոհարարական գործ» մասնագիտության ուսանող Հարութ Ֆրիկի Մուրադյանը 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան երրորդ պատերազմին մասնակցեց Ջրականից մինչև Կովսական: Զոհվեց 2020թ. հոկտեբերի 24-ին:

Գորիսի պետական քոլեջի «Ատաղձագործական, մանրահատակագործական և ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության ուսանող Տիգրան Արթուրի Խաչատրյանը 2020թ. պատերազմի ժամանակ եղել է Հադրութում, Կարմիր շուկայում: Վերջին զանգը եղել է հոկտեմբերի 12-ին: Միայն 2021թ. ԴՆԹ-ի անալիզով հաստատվել է մահը:

2004 թ. քոլեջի շրջանավարտ Խաչիկ Հրաչիկի Պետրոսյանը մարտնչել է Սանասարի (Կուբաթլի) մարտերում, վիրավորվել հոկտեմբերի 23-ին, զոհվել նոյեմբերի 7-ին:

2023թ. սեպտեմբերին Արցախից բռնի տեղահանված, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսանող Աստուր Արթուրի Իսախանյանը 2020թ. 44-օրյա պատերազմի մարտերին մասնակցել է Զաբուղում:

Հայ ժողովուրդը հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտերում կարողացավ ցույց տալ միասնականություն, հավաքական ուժով ցույց տվեց իր հողում ապրելու և արարելու ուժն ու կարողությունը: Այդ ամենին անուրանալի է քոլեջի դասախոսների և ուսանողների մասնակցությունը:

ԴԱՎԻԹ ՁՈՒԼՀԱԿՅԱՆ

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՐԹՕՋԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Սովորելով Գորիսի պետական քոլեջում՝

շրջանավարտը ձեռք է բերում նախընտրած մասնագիտությանը համապատասխան նրբություններն ու աշխատաշուկայում տեղ գտնելու բոլոր հնարավորությունները

ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Գորիսի պետական քոլեջի դասախոս

Գորիսի պետական քոլեջը գոյության ընթացքում առաջնորդվել է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Զարգացող աշխարհում կրթությունն ունի փոփոխվելու, զարգանալու հատկություն:

Գորիսի պետական քոլեջի ռազմավարական գլխավոր խնդիրն այսօր էլ զարգացող-փոփոխվող կրթական համակարգին համահունչ քայլելն է:

Աշխատաշուկայի ուսումնասիրությունների արդյունքում անընդհատ փոփոխվում են մասնագիտությունները՝ ներդրվելով նոր և արդիական մասնագիտություններ:

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒՀԱԿ) կողմից անընդհատ վերանայվում են պետական կրթական չափորոշիչները, որը ևս խոսում է կրթության բովանդակության անընդհատ փոփոխման ու զարգացման մասին:

Քոլեջի ռազմավարական մյուս և կարևոր խնդիրը որակյալ կրթության ապահովումն է, որի իրականացման համար առաջնահերթ է մանկավարժական կազմի ճիշտ և գրագետ ընտրությունը:

2024 թ. մասնագիտական առարկաներ դասավանդող մանկավարժների կամավոր ատեստավորումը նախատեսվում է իրականացնել երկու ուղղությամբ՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ և խոհարարություն:

ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից ամեն տարի իրականացվում են վերապատրաստումներ, որոնք նպատակ ունեն ամրապնդելու մանկավարժների մեթոդական հմտութ-

յունները:

2022 թ. լույս են տեսել քոլեջի ֆիզիկայի դասախոս Մարտուն Դալլաքյանի «Ընդհանուր ֆիզիկա. լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներ» և «Խնդիրների լուծման ուսումնամեթոդական ձեռնարկ. Մաս 1. Մեխանիկա» աշխատությունները:

Քոլեջի մանկավարժական կազմի կողմից աշխատությունների հրատարակումը շարունակական բնույթ ունի:

Որակյալ կրթության ապահովման գլխավոր գրավականներից է նյութատեխնիկական բազայի ապահովումը: Նախորդ տարիներին քոլեջը համալրվել է նոր համակարգիչներով, նորագույն ռեսուրսներով է զինվել կենսաբանության կաբինետը, ընթացիկ տարում ներդրված «Լուսանկարչական գործ» մասնագիտության համար բացվել է նոր և վերազինված լսարան:

Ուսանողներն իրենց պրակտիկան, ըստ համապատասխան մասնագիտությունների, անց են կացնում դեղատներում, ռեստորանային համալիրներում, Գորիսում գործող բժշկական կենտրոններում, քարի և փայտի արհեստանոցներում, նախակրթարաններում, բջջային և վեբ-համակարգերի մշակման «Զելլոս» փակ բաժնետիրական ընկերությունում, «Օգմենտար» փակ բաժնետիրական ընկերությունում:

Քոլեջն այսօր ունի բոլոր գործոնները՝ տարածաշրջանում բարձր որակի միջին մասնագիտական կրթություն իրականացնելու համար:

Քոլեջում կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով:

Միջին մասնագիտական կրթական ծրագրերով գործում են հետևյալ մասնագիտությունները՝

«Նախադպրոցական կրթություն», որն իրականացվում է նաև հեռակա ուսուցմամբ, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Դեղագործություն», «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Պարի ուսուցում»:

Իսկ նախնական մասնագիտական կրթական ծրագրերով գործում են «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»՝ վարսահարդար, մատնահարդար, դիմահարդար որակավորումներով, «Խոհարարական գործ», «Մետաղների մշակման տեխնոլոգիա՝ ճնշմամբ», «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ», «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունները:

Այս տարվանից ներդրվել է «Լուսանկարչական գործ» մասնագիտությունը:

Ընդ որում՝ կառավարության կողմից սահմանվել է կրթաթոշակի նոր մոտեցում: Մասնավորապես՝ պետության համար կարևոր և առաջնահերթ մասնագիտություններով՝ ընդունելության գրավչության բարձրացման և առավել պահանջարկ ունեցող աշխատատեղերի համալրման խնդրի համաչափ կարգավորման նպատակով, հաստատվել է գերակա մասնագիտությունների ցանկ: Այդ ցանկում են նաև ար-

ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

Ուստարի	Ընդունվածների թիվը	Ուսանողների թիվ	Շրջանավարտների թիվը
2009-2010	122	131	56
2010-2011	113	264	63
2011-2012	90	256	78
2012-2013	120	247	93
2013-2014	134	286	89
2014-2015	110	261	126
2015-2016	124	277	123
2016-2017	131	247	89

Ուստարի	Ընդունվածների թիվը	Ուսանողների թիվ	Շրջանավարտների թիվը
2017-2018	111	215	58
2018-2019	112	200	64
2019-2020	79	170	50
2020-2021	132	219	61
2021-2022	157	284	81
2022-2023	156	281	81
2023-2024	135	285	65
2024-2025	156	316	-

Կդեն իսկ քոլեջում գործող «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» և «Մետաղների մշակման տեխնոլոգիա՝ ճնշմամբ» մասնագիտությունները: Եվ այդ մասնագիտություններով սովորողներին կտրամադրվի ամսական 50 հազար դրամ կրթաթոշակ:

Հաստատությունում առկա ուսուցմամբ ընդունելությունն իրականացվում է հիմնական և միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումով, իսկ հեռակա ուսուցմամբ ընդունելությունը՝ առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումով:

Օտարերկրացիները՝ իրենց ընտրությամբ, հաստատություն կարող են ընդունվել «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող» ընդունելության կարգով՝ միայն վճարովի համակարգ կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքներով, բացառությամբ ոլորտային՝ այսինքն՝ արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի:

Հաստատությունն ընդունելությունն իրականացնում է Լիազոր մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված անվճար և վճարովի տեղերին համապատասխան:

Ընդունելության արդյունքներն ամ-

փոփվում և տեղադրվում են նաև Գորիսի պետական քոլեջի ֆեյսբուքյան էջում և կայքէջում:

Ընդունելության մրցույթն անցկացվում է Լիազոր մարմնի կողմից ըստ մասնագիտությունների հատկացված անվճար և վճարովի տեղերի համար՝ հետևյալ սկզբունքով.

1) անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար սույն կարգի ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը.

2) ոլորտային մասնագիտություններով անվճար տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և սահմանված կարգի ցանկերով տվյալ մասնագիտության քննության/քննությունների գնահատականի(ների) ու տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը:

Ժամանակակից ուսումնական լաբորատորիաներ, նյութատեխնիկական բազայի համալրում



«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2024/25 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկ

Միջին մասնագիտական/ կրթական ծրագրեր

Նախնական մասնագիտական (արհեստագործական) մասնագիտությունների կրթական ծրագրեր

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՐԹՕՁԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Քոլեջ-ուսանող-գործատու արդյունավետ շղթա

Շրջանավարտների՝ աշխատանք գտնելուն նպաստում է քոլեջի Կարիերայի կենտրոնը՝ ապահովելով կապ գործատուների և շրջանավարտների միջև: Իսկ Կարիերայի կենտրոնի և շրջանավարտների միջև հետադարձ կապի պահպանումը մշտական է, և վերջիններիս կողմից տվյալների հավաքումը կենտրոնի գործառույթներից է: Ներկայացված տվյալների համաձայն՝ շրջանավարտների շուրջ 50 տոկոսը կարողանում է իրացվել աշխատաշուկայում՝ իրենց մասնագիտություններով:

Ըստ կենտրոնի վերլուծությունների՝ ամենապահանջված մասնագիտություններն են «Դեղագործությունը», «Քույրական գործը», «Նախադպրոցական կրթությունը», «Խոհարարական գործը»:

Քոլեջի գործունեությունը, առանց գործատուի հետ համագործակցության, անհնար է: Գործատու-

Ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ կարևոր առաջնահերթություն

2023 թ. մայիսի 29-ին, Միասնական սոցիալական ծառայության Գորիսի տարածքային կենտրոնի եւ Գորիսի պետական քոլեջի Կարիերայի կենտրոնի համագործակցության արդյունքում, տեղի ունեցավ հանդիպում՝ համայնքի շահագրգիռ գործատուների հետ: Հանդիպման նպատակն էր իրազեկել աշխատաշուկայի արդի կարիքների մասին, քննարկման միջոցով վեր հանել գործատուների պահանջներն ու սպասելիքները եւ անհրաժեշտության դեպքում դրանք արտացոլել ՄԿԾ-ում:

ներն ընդգրկված են քոլեջի կառավարման խորհրդի կազմում, որպես հանձնաժողովների նախագահներ մասնակցում են պետական ատեստավորման քննություններին:

Գործատուների հետաքրքրություններն ու պահանջներն ուսումնասիրելու արդյունքում երբեմն կարող են փոփոխության ենթարկվել մասնագիտությունները, բացվել նորերը: Մասնագիտությունները պետք է լինեն «գորիսյան», «սյունիքյան»: Ապագա մասնագետը պետք է վստահ լինի, որ իր մասնագիտությամբ աշխատանք է ունենալու հենց Գորիսում: Ճիշտ կողմնորոշված գործունեության արդյունքում շրջանավարտը հաճախ մնում է Գորիսում կամ ուղղորդվում այլ մարզ՝ աշխատանք փնտրելու: Առավել քան ցանկալի է, որ նրանք արարեն, աշխատեն և մնան Սյունիքում:

Շրջանավարտներից շատերը կրթությունը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատություններում, բայց և շատերն էլ անմիջապես անցնում են աշխատանքի: Օրինակ՝ բուժքույրերը համալրում են Գորիսի բժշկական կենտրոնի միջին բուժանձնակազմի շարքերը, դեղագործները հիմնականում աշխատում են տեղի դեղատներում: ″

ՀԱՐՅՈՒՐԱՍՅԱ ԿՐԹՕՋԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Ուսանողական միջոցառումների շարքից

2012 թվականը Եղիշե Չարենցի ծննդյան 115 և պոետական գործունեության 100-ամյակն էր (անդրանիկ բանաստեղծությունը՝ «Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին»), իսկ նոյեմբերի 27–ը նրա մահվան 75-րդ տարելիցն էր:

Աշնանային այդ օրվա պայծառ տրամադրությունը տեղափոխվել էր Գորիսի պետական քոլեջի դահլիճ: Բեմում բանաստեղծի՝ Մարտիրոս Սարյանի վրձնած մեծադիր նկարն էր և Հրանտ Մաթևոսյանի խոնարհումի խոսքը՝ **«... Ինքը մեր ժամանակի առաջնորդն է, որովհետև ինքն ազատության ոգին է, ու ազատությունն ինքն է»:**

Ցերեկույթը, որ տեղի ունեցավ **«Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի»** խորագրով, սկսվեց պոետի բանաստեղծությունների ասմունքով:

Այնուհետև Չարենց անհատականության, պոետի, նորարարի մասին ծավալուն խոսքով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը:

Գրական ցերեկույթին մասնակցում էին նաև Գորիսի տարածաշրջանի կրթօջախների և մշակութային հաստատությունների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Միջոցառումը, որ անցավ գիտական բարձր մակարդակով և ուսանողների ակտիվ մասնակցությամբ, ուշագրավ տեղ կզբաղեցնի ոչ միայն քոլեջի, այլև Գորիսի կրթական ու մշակութային տարեգրության մեջ:

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՐԹՕՁԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

2024 թ. ապրիլի 14-ին լրացավ բանաստեղծական անզուգական խոսքի վարպետ Համո Սահյանի ծննդյան 110-ամյակը: Այդ կապակցությամբ Գորիսի պետական քոլեջի դասախոսներն ու ուսանողներն այցելեցին Համո Սահյանի տուն-թանգարան:

ՀԱՅՈՒՐԱՅԻՆ ԿՐԹՈՋԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Հայ ժողովրդի համար ներկա ճակատագրական զարգացումները, տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրողություններն ու առկա մարտահրավերները յուրաքանչյուրիս մտահոգությունն են:
Ամեն օր ավելի ենք համոզվում, որ մեր հույսն ու ապավենը հայ զինվորն է, ով մեր բոլոր պայքարների բովում ցուցաբերել է մեծ արիություն ու անձնվիրում՝ հերոսաբար պաշտպանելով հայրենի երկիրը:
2023 թ. փետրվարի 8-ին Գորիսի պետական քոլեջում տեղի ունեցած միջոցառումը նվիրված էր հայոց բանակին, հայ զինվորին: Քոլեջի ուսանողներն իրենց ելույթներով, ասմունքով, երգով, բեմադրություններով փառաբանեցին հայոց բանակը և խոնարհվեցին հայրենիքի պաշտպանության համար նահատակված բոլոր քաջորդիների հիշատակի առջև: »

Կրթօջախի զինղեկ, մայոր Կամո Բեգլարյանը «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակում 2023 թ. նոյեմբերի 21-ին կազմակերպել էր միջոցառում, որին հրավիրված էին 44-օրյա պատերազմի մասնակից զինվորականներ՝ N զորամասի փոխգնդապետ Ռ. Հովհաննիսյանի գլխավորությամբ: Նպատակն էր՝ ուսանողների մոտ զարգացնել և ձևավորել որոշակի կարողություններ ու հմտություններ՝ միտված ուսանողի բարոյահոգեբանական հատկանիշների ուժեղացմանը: Փորձառու զինվորականները ներկայացրին ժամանակակից մարտավարության առանձնահատկությունները, ցուցադրեցին որոշ զենքերի տեսակներ, ինչպես և գործարկեցին անօդաչու թռչող սարք: »

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՐԹՕՁԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

2023 թ. մայիսի 3-ին քոլեջի երգ-երաժշտության դասախոս Լյուդմիլա Բադալյանը կազմակերպել էր բաց դաս՝ «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ: Դասը հայրենասիրական երգերի և նրանց ազդեցության մասին էր:

Ապագա դաստիարակները համոզված են, որ ժամանակի մարտահրավերներին դիմակայելու համար նախևառաջ պետք է կրթել հայրենասեր սերունդ: Իսկ երեխաների մոտ սերն առ հայրենիք ձևավորվում է նաև հայրենասիրական ու ազգային երգերի միջոցով:

Դասախոս Լ. Բադալյանը նշեց, որ հայրենասիրական, հատկապես ռազմի երգերը Հայաստանի համար օրհասական պահերին ոգեշնչել և մեծ ուժ են տվել մեր զինվորներին: Եվ այսօր, առավել քան երբևէ, հայրենասիրական երգերը պետք է լինեն մեր երիտասարդների շուրթերին:

Ուսանողները կատարեցին «Մեր հայրենիք», «Գետաշեն», «Մարտիկի երգը», «Պատերազմ ենք գնում» և այլ հայրենասիրական երգեր, որոնք ունկնդիրներին մերթ հուզմունք պատճառեցին, մերթ ուրախություն և մերթ հավատ՝ ունենալու հզոր և արժանապատիվ հայրենիք:

Արցախցի ուսանողները՝ ինտեգրման ճանապարհին

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՐԹՕՋԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Տարեգրության սրահը՝ մեկդարյա ընթացքի և ավանդությունների պահեստարան

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՐԹՕՋԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Քոլեջի գրադարանը՝ արդիականացման ուղիով

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՏԱՂ՝ ՁՈՆՎԱԾ ԳՐՔԵՐԻՆ

Օ՜, գրքերի աշխարհը - տիեզերք է անեզր։ -

Արևների նման բազմապիսի,
Ե՛վ աստղերի նման, և՛ շողերի -
Ես սիրում եմ գրքերը, որ աշխարհի մասին
Բարբառում են անձուկ ու մտերիմ։
Տարփանքով, ինչպես պատանին,
Որ սիրում է իր լույս ընկերուհուն փարվել -
Ես սիրում եմ գրքերը թե՛ նոր, թե՛ հին,
Թե՛ արվեստով գրված, թե՛ անարվեստ։
Բայց և կամքով անշեղ, ինչպես ղեկավարը,
Ինչպես ա՛յրն է հասուն ձգտում սիրած գործին,-
Ես սիրում եմ գրքերի աշխարհը
Իմ խոհերի վսեմ այրուձին։ -

Նրանք շա՜տ են ու բազմապիսի, տարբեր ու գունագեղ,
Ծնված զանազան դարերում ու երկրներում,
Յուրաքանչյուրը բերում է մի առանձի՛ն պարգև,
Յուրաքանչյո՛ւրն իր մեջ մի աշխարհ է կրում։ -
Մեր կյանքի երկար ճանապարհին
Հանդիպում են նրանք հետզհետե
Եվ դառնում են ընկեր ու մտերիմ,
Կամ մնում են անցած տարիների ետևը...

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈԼԵՋԻ ՄԱՍԻՆ

Բարեգործության և աջակցության շնորհիվ. միայն թվեր ու փաստեր (2009-2024 թթ.)

Քոլեջի հանդեպ կա հանրային որոշակի ուշադրություն: Դրա շնորհիվ է, որ բազմաթիվ անհատներ, ՀԿ-ներ, տնտեսվարող սուբյեկտներ, միջազգային կազմակերպություններ ձգտել են, հնարավորության սահմաններում, աջակցել Գորիսի հնագույն կրթօջախին: Ասվածը հավաստող մի քանի թվեր ու փաստեր...

- *Մոտ 13 մլն դրամի ֆինանսական օգնություն:*
- *Մոտ 30 մլն դրամի կատարված աշխատանքներ (32 պատուհանի տեղադրում, յոթ սանհանգույցի հիմնանորոգում, խոհանոցի, փայտի արհեստանոցի, ռազմագիտության կաբինետի ստեղծում):*
- *Տարբեր տեսակի գույքի տրամադրում, որոնք նպաստում են ուսումնական գործի կազմակերպմանը (անատոմիական մոդելներ,*

դյուրակիր համակարգիչ Laptor-DELL3511, պրոյեկտոր DWX1826, շարժողական գրատախտակ, տպիչ սարք 2 հատ (A 4 գունավոր և A4 սև-սպիտակ), տպիչ սարք (A 3 գունավոր), արևային պանել 2 կՎտ, մարտկոց 2 հատ, կարգավորիչ, թվային ջերմաչափ և գործիքներ, դրոն 3 հատ, օդափոխիչ 1 հատ, լուսանկարչական ապարատ՝ օժանդակ պարագաներով):

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈԼԵՋԻ ՄԱՍԻՆ

Պետական պաշտոնյաներ, ովքեր վերջին տարիներին այցելել են Գորիսի պետական քոլեջ

2020 թ. փետրվարի 18-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանն այցելեց Գորիսի պետական քոլեջ:

2021 թ. հունիսի 5-ին ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը և Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանն այցելեցին Գորիսի պետական քոլեջ:

ՀՀ ԱԺ պատգամավորներ Դավիթ Դանիելյանն ու Նարեկ Գրիգորյանը 2023 թ. փետրվարի 18-ին այցելեցին Գորիսի պետական քոլեջ:

2023 թ. օգոստոսի 25-ին Գորիսի պետական քոլեջ է այցելել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈԼԵՋԻ ՄԱՍԻՆ

Կրթօջախը՝ պետական մարմինների ուշադրության կենտրոնում

Սահմանապահ Գորիսի վաստակաշատ կրթօջախն ունի բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը վաղուց անհրաժեշտություն է դարձել:

Գնահատելի է, որ այդ խնդիրները չեն վրիպել նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, մասնավորապես պատգամավոր Լիլիթ Ստեփանյանի ուշադրությունից: Վերջինիս նախաձեռնությամբ էլ 2023 թ. մարտի 20-ին ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում, հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանի գլխավորությամբ, հանդիպում տեղի ունեցավ քոլեջի ներկայացուցիչների հետ:

Քոլեջի պատվիրակության կազմում էին կրթօջախի տնօրեն Կարեն Լազարյանը, ուսումնական գծով փոխտնօրեն Դավիթ Ջուլհակյանը, որակի ապահովման պատասխանատու Աննա Ալեքսանյանը, արտաքին կապերի պատասխանատու Ծուշանիկ Հովհաննիսյանը և ամբիոնի վարիչ Լիաննա Գևորգյանը:

Հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման ու ռազմավարության բաժնի պետ Արմենուհի Պողոսյանը և Ուսուցման ազգային հիմնադրամի տնօրեն Մարինե Հակոբյանը:

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈԼԵՋԻ ՄԱՍԻՆ

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պատվիրակությունների այցելություններ Գորիսի պետական քոլեջ

Վիեն-Գորիս համագործակցության շրջանակում Գորիսում գտնվող պատվիրակությունը 2023 թ. ապրիլի 27-ին այցելեց Գորիսի պետական քոլեջ:

2023 թ. մայիսի 11-ին Գորիսի պետական քոլեջ էին այցելել Actions Santé Femmes ասոցիացիայի գլխավոր քարտուղար, Փարիզի բժշկական համալսարանի պրոֆեսոր Անրի-Ժան Ֆիլիպը և նույն ասոցիացիայի անդամ, մանկաբարձուհի Ինես Լառոկը: Հյուրերը հանդես եկան կոնկրետ գործողությունների ծրագրով՝ նախատեսված բժշկական մասնագիտությունների, մասնավորապես քույրական և մանկաբարձական բաժիններում սովորող ուսանողների համար: Պրոֆեսոր Անրի-Ժան Ֆիլիպը նշեց, որ պարբերական այցերի ընթացքում դասախոսություններ կկարդա քոլեջի ուսանողների համար ոչ միայն Գորիսի պետական քոլեջում, այլև հնարավորություն կընձեռի նրանց միանալ իր վերապատրաստումներին նաև օնլայն հարթակում:

2022 թ. մայիսի 19-ին Գորիսի պետական քոլեջ այցելեց Եվրոպական ներդրումային բանկի Հայաստանի պետական հատվածի վարկավորման գործառնությունների պատասխանատու Ստեֆանի Գիար-Բրանին: Եվրոպական ներդրումային բանկը նախատեսում է ծրագրերի մեկնարկ Սյունիքի մարզում: Ծրագրերն ուղղված կլինեն կրթական, առողջապահական, սոցիալական և այլ ոլորտների բարելավմանն ու զարգացմանը: Այցը Գորիսի պետական քոլեջ ճանաչողական նպատակ ուներ:

2023 թ. մայիսի 19-ին Գորիսի պետական քոլեջում կայացավ Էրազմուս+ ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հանդիպում: Հանդիպմանը մասնակցում էին Սյունիքի տարածաշրջանի քոլեջների տնօրեններ, փոխտնօրեններ, պատասխանատուներ, ինչպես և համայնքապետարանի ու ՀԿ-ների ներկայացուցիչներ: Էրազմուս+ ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան և ծրագրի պատասխանատու Էդիթ Սողոմոնյանը ներկայացրին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում գործող հաստատությունների ծրագրի կողմից տրամադրվող հնարավորությունները, ֆինանսավորման պայմանները:

ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՍՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

Գորիսի պետական քոլեջը տոնում է գործունեության փառահեղ հարյուրամյակը

Սյունիքի մարզի լավագույն կրթօջախներից մեկը՝ Գորիսի պետական քոլեջը, հարյուր տարեկան է: Մեկ դար և հազարավոր շրջանավարտներ՝ արհեստի ու արվեստի ներկայացուցիչներ, մանկավարժներ...

Քոլեջի վաստակաշատ տնօրենների նվիրյալ և պատասխանատու գործը 2009 թվականից ստանձնել է Կարեն Լազարյանը: Ծնունդով գորիսեցի, մասնագիտությամբ մանկավարժ Կ. Լազարյանի և մանկավարժական անձնակազմի շնորհիվ, հատկապես վերջին տարիներին, քոլեջում նորացվել և նոր շունչ է հաղորդվել կրթական ծրագրերին ու մասնագիտություններին, պատրաստվել են բարձրակարգ, գիտելիքաշատ մասնագետներ՝ կարևորելով երիտասարդների պետականամետ մտածելակերպն ու ազգային ոգու անկոտրում լինելը:

Գորիսի պետական քոլեջի մերօրյա հաստատուն քայլերի, ազգանպաստ առաքելության և տասնամյակներով ձևավորված ավանդույթների մասին է պատմում Կարեն Լազարյանը:

Մեկդարյա պատմություն. Գորիսի պետական քոլեջի կայացման ուղին

Դեռևս 1924-25 ուսումնական տարում ՀՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից ստեղծվեց Գորիսի մանկավարժական տեխնիկումը, որը մասնագետներ էր պատրաստում տարածաշրջանի դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում աշխատելու համար: Քոլեջը բարդ, դժվարություններով լի ճանապարհ է անցել... Եվ փառք ու պատիվ այն տնօրեններին, մանկավարժներին, ովքեր հաղթահարել ու քոլեջը հասցրել են մինչև մեր օրեր: 2009 թվականից քոլեջի ղեկավարը ես եմ, ինչն ինձ համար մեծագույն պատիվ է, քանզի ինձ է վստահվել մեկդարյա ավանդույթ ունեցող, փառահեղ ճանապարհ անցած կրթական հաստատության ղեկավարումը, որը մշտապես կարևոր դերակատարում է ունեցել ինչպես Գորիսի, այնպես էլ ամբողջ Սյունիքի համար: Տարածաշրջանում գործում են մի քանի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Կա մրցակցություն, որին պետք է դիմանալ՝ հաղթահարելով բոլոր մարտահրավերները: Արդեն 100 տարի՝ մեզ հաջողվել է լինել պահանջված, հուսով եմ՝ այդպես էլ կշարունակվի:

Գորիսի պետական քոլեջը տոնում է գործունեության փառահեղ հարյուրամյակը

Սյունիքի մարզի լավագույն կրթօջախներից մեկը՝ Գորիսի պետական քոլեջը, հարյուր տարեկան է: Մեկ դար և հազարավոր շրջանավարտներ՝ արհեստի ու արվեստի ներկայացուցիչներ, մանկավարժներ...

Քոլեջի վաստակաշատ տնօրենների նվիրյալ և պատասխանատու գործը 2009 թվականից ստանձնել է Կարեն Լազարյանը: Ծնունդով գորիսեցի, մասնագիտությամբ մանկավարժ Կ. Լազարյանի և մանկավարժական անձնակազմի շնորհիվ, հատկապես վերջին տարիներին, քոլեջում նորացվել և նոր շունչ է հաղորդվել կրթական ծրագրերին ու մասնագիտություններին, պատրաստվել են բարձրակարգ, գիտելիքաշատ մասնագետներ՝ կարևորելով երիտասարդների պետականամետ մտածելակերպն ու ազգային ոգու անկոտրում լինելը:

Գորիսի պետական քոլեջի մերօրյա հաստատուն քայլերի, ազգանպաստ առաքելության և տասնամյակներով ձևավորված ավանդույթների մասին է պատմում Կարեն Լազարյանը:

Մեկդարյա պատմություն. Գորիսի պետական քոլեջի կայացման ուղին

Դեռևս 1924-25 ուսումնական տարում ՀՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից ստեղծվեց Գորիսի մանկավարժական տեխնիկումը, որը մասնագետներ էր պատրաստում տարածաշրջանի դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում աշխատելու համար: Քոլեջը բարդ, դժվարություններով լի ճանապարհ է անցել... Եվ փառք ու պատիվ այն տնօրեններին, մանկավարժներին, ովքեր հաղթահարել ու քոլեջը հասցրել են մինչև մեր օրեր: 2009 թվականից քոլեջի ղեկավարը ես եմ, ինչն ինձ համար մեծագույն պատիվ է, քանզի ինձ է վստահվել մեկդարյա ավանդույթ ունեցող, փառահեղ ճանապարհ անցած կրթական հաստատության ղեկավարումը, որը մշտապես կարևոր դերակատարում է ունեցել ինչպես Գորիսի, այնպես էլ ամբողջ Սյունիքի համար: Տարածաշրջանում գործում են մի քանի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Կա մրցակցություն, որին պետք է դիմանալ՝ հաղթահարելով բոլոր մարտահրավերները: Արդեն 100 տարի՝ մեզ հաջողվել է լինել պահանջված, հուսով եմ՝ այդպես էլ կշարունակվի:

Վերջին տարիների նշանակալի ձեռքբերումները

Երբեմն ձեռքբերում ասվածը հարաբերական է: Այն, որ մենք գործում ենք, ունենք նոր մասնագիտություններ, ապահովում ենք աշխատատեղեր ու պատրաստում գիտելիքներով հարուստ շրջանավարտներ՝ արդեն իսկ ձեռքբերում է: Կարծում եմ՝ կրթական յուրաքանչյուր հաստատության համար ամենակարևորը ծնողի վստահությունն է, հանրության վստահությունը, ինչը մենք վայելում ենք: Ասվածի վառ ապացույցն ամեն տարի չպակասող դիմորդներն են.

Մանկավարժի առաքելությունն է՝ հայրենասեր երիտասարդներ դաստիարակել: Թե հայի ոգին արթնացնես, այլևս նրան հնարավոր չի լինի կոտրել, ընկճել. հայը հաղթող տեսակ է, ինչը հավաստող բազմաթիվ օրինակների ականատես եղանք նաև վերջին տարիներին:

մինչև 150 դիմորդ՝ մրցակցության մերօրյա պայմաններում: Շուտով կսկսվի քոլեջի հավատարմագրման գործընթացը, որի ուղղությամբ երկու տարի շարունակ աշխատանքներ ենք իրականացնում: Նյութական ձեռբերումներ ևս ունենք. հատկապես վերջին շրջանում, շնորհիվ մեր գործընկերների, աջակիցների, ունեցել ենք շենքային պայմանների որոշակի բարելավում, նյութատեխնիկական բազայի համալրում:

Հաջողել՝ նվիրյալների շնորհիվ...

Մեր գոյատևման պայքարում՝ հաջողությունների հիմքում նաև մեր մանկավարժական ու վարչական աշխատակազմի ներդրած ջանքերն են, այն նվիրումն ու պատրաստակամությունը, որոնցով առաջնորդվում է մեզանից յուրաքանչյուրը: Գորիսում՝ յուրաքանչյուր ոլորտում, մասնագետների խնդիր կա: Ծրագրավորողները քիչ են, կա մրցակցություն, մարդիկ նախընտրում են զբաղվել բարձր վարձատրությամբ աշխատանքով: Նմանատիպ խնդիրների լուծման ճանապարհներից մեկը վերապատրաստումներն են: Քոլեջներում այլևս պարտադիր է ատեստավորումը, ինչի համար ուրախ ենք: Մեր մասնագետները կատեստավորվեն, ինչը՝ վերջնարդյունքում, ենթադրում է համեմատաբար բարձր վարձատրություն: Կապրենք, ավելի հաստատուն կդարձնենք մեր ընթացքը... Կառավարության յուրաքանչյուր ճիշտ մշակված ծրագիր նպաստում է առկա խնդիրների լուծմանը:

Նոր ժամանակներ, նոր ու պահանջված մասնագիտություններ

Իսկապես, ժամանակը շատ արագ է ընթանում, և պետք է կարողանալ քայլել նրան համընթաց՝ նոր մասնագիտություններ ունենալ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Պետք է ճկուն միտք ունենալ, գործել խոհեմ, որպեսզի ժամանակից հետ չմնանք: Ունենք և՛ միջին մասնագիտական, և՛ արհեստագործական մասնագիտություններ: Մեր օրերում կան «մեռնող» մասնագիտություններ, որոնք չեն հետաքրքրում դիմորդին, որոնք այլևս պահանջված չեն: Պետք է թարմացնել ուսուցանվող մասնագիտությունների ցանկը, և ամեն ինչ անել՝ տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համահունչ:

Նոր ծրագրեր, նոր ուսումնական տարվա շեմին

Հատկապես տարածքային կորուստներից հետո հասկացանք, որ պատերազմող երկիրը պետք է ուշադիր լինի իր ամեն քար ու թփի, ամեն հուշակոթողի, խաչքարի, պատմական կառույցի նկատմամբ: Պետք են մասնագետներ, ովքեր կզբաղվեն դրանք լուսանկարելով, վավերագրելով: Այս տարվանից քոլեջում գործելու է «Լուսանկարչություն» մասնագիտությունը: Ամեն գյուղում, քաղաքում պետք է լինեն լուսանկարիչներ, ովքեր կկարողանան նաև լուսանկարների միջոցով պահպանել մեր ազգային հարստությունը, արժեքները: Սա կարևոր է մեր ապագայի համար, աշխարհին ցույց տալու համար: Լուսանկարչությունը միայն հանդիսություններ հավերժացնելու համար չէ: Այն մասնագիտություն է, որն ազգապահպան նշանակություն ունի. վերջապես պետք է սովորենք ըստ պատշաճի գնահատել մեր արժեքները, հավատքը, խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը...

Հարյուրամյակին ընդառաջ բազմաթիվ ծրագրեր ունենք. ձգտում ենք արժանապատվորեն նշանավորել քոլեջի լինելիության հոբելյանական տարին: Մի շարք հետաքրքիր նախագծեր կան, որոնցից մեկն էլ կրթօջախի օրհներգի ստեղծումն է, որն առաջին անգամ կհնչի հոբելյանական միջոցառմանը՝ Արսեն Գրիգորյանի կատարմամբ: Օրհներգի տեքստի հեղինակը Այունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանն է, երաժշտության հեղինակը՝ Անուշ Ալեքսանյանը:

Ղեկավարի որդեգրած սկզբունքները՝ առաջընթացի հիմք...

Մեր՝ հայ մանկավարժներիս, առաքելությունն է՝ բարձր պահել հայի ոգին, սովորեցնել չընկճվել: Եթե ամենքս մեր աշխատանքը ճիշտ կատարենք՝ կանգուն կմնանք մեր հողում: Դժվարություններ լինելու են, խնդիրներ, խոսակցություններ՝ նույնպես: Պետք է կարողանալ չկոտրվել: Մշտապես կազմակերպվում են ռազմահայրենասիրական միջոցառումներ, դասերի ավարտին զրույցներ ենք ունենում հայրենասիրության, հողն ու ջուրը սիրելու, պահպանելու և պաշտպանելու մասին: Եվ ամենակարևորը՝ պետք է խոսքդ գործով ապացուցես, քո վարքով ու նվիրումով, քո պայքարով: Այդժամ ոչինչ և ոչ ոք չի կարող հիասթափեցնել սյունեցուն, ոչ ոք և ոչինչ չի ընկճի նրա ոգին: Այս գաղափարախոսությամբ և սկզբունքով ենք ապրում ամենքս՝ և՛ ես, և՛ մանկավարժական կազմի յուրաքանչյուր անդամ, և վարչական աշխատակազմի ներկայացուցիչները:

Մենք պատերազմական սպառնալիքների ներքո ապրող երկիր ենք, իսկ պատերազմը միայն խրամատը չէ: Կրթությունը, մանկավարժությունն Աստծո կողմից տրված շնորհ են: Պետք է կարողանալ կրթել հայրենասեր ու հայրենատեր զավակ, ով վաղը մեկնելու է ծառայության, ով (հարկ եղած դեպքում) պաշտպանելու է հայրենիքը: Մանկավարժի առաքելությունն է՝ հայրենասեր երիտասարդներ դաստիարակել: Թե հայի ոգին արթնացնես, այլևս նրան հնարավոր չի լինի կոտրել, ընկճել. հայը հաղթող տեսակ է, ինչը հավաստող բազմաթիվ օրինակների ականատես եղանք նաև վերջին տարիներին:

«ՎԱՐԿԱՆԻՇ» ԱՄՍԱԳԻՐ,
N 42, 2024 Թ.

ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՄՈՒԼԻ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

Գորիսի 100-ամյա քոլեջը՝ նոր ուսումնական տարվա շեմին

Ուղիղ մեկ դար առաջ էր, որ Գորիսում ստեղծվեց մանկավարժական ուսումնարանը՝ տարիների ընթացքում կրելով տարբեր անվանումներ: Քոլեջը պատրաստվում է աշնանը նշելու իր հարյուրամյակը: Մինչ այդ փորձեցինք ճշտել, թե անցած ճանապարհի ինչպիսի ընկալում կա կրթօջախում, թե գործունեության 100-րդ տարում ինչպես են պատրաստվում առաջիկա՝ 2024-2025 ուսումնական տարվա ընդունելությանը: Մեզ հետաքրքրող այդ հարցերին պատասխանում է քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանը:

– Պարոն Լազարյան, այս տարի լրանում է քոլեջի հիմնադրման 100-ամյակը. ի՞նչ ճանապարհ է անցել քոլեջը:

– Եթե մտովի տեղափոխվենք 1920-ական թվականներ, երբ ստեղծվեց Գորիսի մանկավարժական տեխնիկումը, ապա կտեսնենք, որ այն ժամանակ ներկայիս Սյունիքի մարզի մեջ մտնող չորս շրջանում (Գորիս, Կապան, Սիսիան, Մեղրի) որևէ մասնագիտական ուսումնական հաստատություն չկար:

Այսինքն՝ կադրերի պատրաստման միակ հաստատությունը կամ դարբնոցը Գորիսի մանկավարժական ուսումնարանն էր: Ընդ որում՝ խոսքը միայն մանկավարժական կադրերի պատրաստման մասին չէր: Թեև ուսումնարանը կոչվում էր մանկավարժական, բայց շրջանավարտներն ընդգրկվում էին պետական կառավարման, կուսակցական, տնտեսական ոլորտներում:

Ասել է թե՝ 1920-ականներից սկսած՝ մի քանի տասնամյակ, ներկայիս Սյունիքի ընթացքը հնարավոր չէ պատկերացնել առանց Գորիսի մանկավարժական ուսումնարանի և նրա շրջանավարտների:

Գորիսի մանկավարժական ուսումնարանը տասնամյակներ շարունակ իրեն էր ձգում նաև Վայոց ձորի, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի երիտասարդներին:

Կա նաև մեկ ուրիշ հանգամանք. Գորիսի մանկավարժական ուսումնարանը տևական ժամանակ սովորողների մեջ կայուն հիմքեր էր ստեղծում շարունակական կրթության համար: Հարյուրավոր մարդիկ՝ մեր շրջանավարտներից, իրենց կրթությունն են շարունակել մայրաքաղաքի բուհերում: Եվ նրանցից շատերը դարձել են նշանավոր դեմքեր գիտության ոլորտում, կառավարման համակարգում, արվեստում և մասնավորապես հայ արձակում:

Այդ ամենին զուգահեռ՝ Գորիսի մանկավարժական ուսումնարանը՝ դասախոսներով, շրջանավարտներով և ուսանողներով, ակտիվ մասնակցություն է ունեցել Մեծ հայրենականին, ինչպես և Արցախի ազատագրության համար մղված հերոսական կռիվներին:

Մի խոսքով՝ Գորիսի պետական քոլեջն արարումի մեկդարյա ճանապարհ է անցել: Այդ ուղին, առանց չափազանցության, փառքի և նվիրումի ճանապարհ է, Գորիսի և ընդհանրապես Սյունիքի տարածաշրջանին պատիվ ու հպարտություն բերող ճանապարհ:

– Այդ տարիների ընթացքում և մասնավորապես Ձեր ղեկավարման տարիներին ի՞նչ նորամուծություններ են կատարվել ուսումնական հաստատությունում:

– Նորամուծություն ասվածը խիստ հարաբերական է: Նորամուծություններ կան (և դա՝ մեր կյանքի բոլոր ոլորտներում), որ բացասական հետևանքներ են ունենում:

Ուրեմն և, Ձեր թույլտվությամբ, փոքր-ինչ փոխենք հարցի ուղղվածությունը՝ ի՞նչ արդյունքներ ենք ունեցել վերջին տարիներին:

Հատկապես վերջին տարիներին մեր տարածաշրջանում՝ կրթական ոլորտում էականորեն ընդլայնվել է մրցակցային դաշտը. պետական կարգավիճակով երեք բարձրագույն ուսումնական հաստատություն, բազմաթիվ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ...

Այդ բազմազանության մեջ հարկավոր էր պահպանել քոլեջի սեփական դեմքն ու դիմագիծը...

Եվ մենք կարողացանք դրան հասնել, կարողացանք մնալ պահանջված:

Դա, իմ կարծիքով, ամենամեծ հաջողությունն է:

Ավելին ասեմ. վերջին տարիներին մեր հասարակությունը բախվեց դեմոգրաֆիական (ժողովրդագրական) խնդիրների, մենք պատերազմ տեսանք՝ ծանրագույն հետևանքներով, Գորիսի տարածաշրջանը դարձավ սահմանապահ երկրամաս՝ դրանից բխող ռիսկերով, այն էլ՝ անվտանգային բնույթի...

Եվ, այդ բոլորով հանդերձ, ամեն տարի՝ միջին հաշվով 150 հոգի նախընտրում է սովորել Գորիսի պետական քոլեջում:

Դա շատ ուշագրավ ցուցիչ է մի քանի առումով:

Դա նշանակում է, որ հանրակրթական դպրոցների շրջանավարտների մի զգալի մասը նախապատվությունը տալիս է Գորիսի պետական քոլեջին:

Դա նշանակում է նաև, որ երիտասարդների մեծ մասը վաղվա օրը, իրենց ապագան, իրենց երազանքները կապում են Գորիսի հետ:

Իսկ այդ ամենը հսկայածավալ աշխատանքի արդյունք է՝ մասնագիտությունների ճիշտ ընտրություն, կրթական գործի արդիականացում, ուսումնաօժանդակ բազայի հարստացում, դասախոսական կազմի որակական մակարդակի բարձացում...

Կարևոր նորամուծություն եմ համարում նախնական արհեստագործական

մասնագիտությունների ներդրումը, որի շնորհիվ փորձում ենք պահպանել կամ վերականգնել մեր ազգային արհեստների մի մասը:

Նորամուծություն եմ համարում ժամանակակից ուսումնական լաբորատորիաների հիմնումը, շենքային պայմանների որոշակի բարելավումը:

Այդ ամենի արդյունքում տեղի է ունեցել կառուցվածքային որոշակի փոփոխություն ևս, ինչի շնորհիվ նաև նոր աշխատատեղեր են ստեղծվել:

Ահա, թե ինչ արդյունքներ եք ունեցել վերջին տարիներին:

– Ցուցանիշներ կա՞ն, թե շրջանավարտներից քանիսն են աշխա-

... Շատ կարևոր է քոլեջ և հիմնական գործատուներ մշտական կապը: Ուսանողը պետք է նախընտրած մասնագիտությանը համահունչ աշխատավայրերին ծանոթանա, իսկ գործատուն պետք է իմանա, տեսնի, թե ինչպես են պատրաստվում իրեն անհրաժեշտ կադրերը:

տանքի անցել, որ մասնագիտություններն են ավելի պահանջված:

– Իհարկե՝ կան: Շրջանավարտների՝ աշխատանք գտնելուն նպաստում է քոլեջի Կարիերայի կենտրոնը՝ ապահովելով կապ գործատուների և շրջանավարտների միջև: Իսկ Կարիերայի կենտրոնի և շրջանավարտների միջև հետադարձ կապի պահպանումը մշտական է, և վերջիններիս կողմից տվյալների հավաքումը կենտրոնի գործառույթներից է: Ներկայացված տվյալների համաձայն՝ շրջանավարտների շուրջ 50 տոկոսը կարողացել է իրացվել աշխատաշուկայում՝ իրենց մասնագիտություններով կամ այլ մասնագիտություններով:

– Կա՞ արդյոք համագործակցություն աշխատաշուկայի հետ:

– Առանց աշխատաշուկայի, առանց գործատուների հետ համագործակցության հնարավոր չէ պատկերացնել ոչ քոլեջի ներկա ընթացքը, ոչ էլ վաղվա օրը:

Նախ՝ մեր օրերում, մեր աչքի առաջ անընդհատ փոփոխություններ են տեղի ունենում աշխատաշուկայում: Մենք մշտապես հետևում ենք այդ գործընթացներին, զարգացումներին և դրանից բխող հետևություններ անում:

Այսինքն՝ մենք պետք է մեր ծրագրերը կառուցենք աշխատաշուկայի պահանջներին համահունչ:

Այնուհետև՝ շատ կարևոր է քոլեջ և հիմնական գործատուներ մշտական կապը: Ուսանողը պետք է իր մասնագիտությանը համահունչ աշխատավայրերին ծանոթանա, իսկ գործատուն պետք է իմանա, տեսնի, թե ինչպես են պատրաստվում իրեն անհրաժեշտ կադրերը:

Այդ ամենը պահանջում է փոխայցելություններ, հանդիպումներ...

Պարբերաբար գնահատում ենք գործատուների կարիքները՝ նաև հարցումների տեսքով՝ պարզելու, թե մեր շրջանավարտները որքանով են իրենց դրսևորում գործնականում:

Նման հարցումների արդյունքները, ի վերջո, դառնում են վերլուծության, քննարկման առարկա:

Կարևոր է նաև հանգամանքը, որ գործատուների ներկայացուցիչները մասնակցում են պետական ատեստավորման քննություններին և անձամբ համոզվում ուսանողների տեսական ու գործնական պատրաստվածության մեջ:

Մյուս կողմից՝ շատ կարևոր է արտադրական պրակտիկան, որին մեծ ուշադրություն ենք դարձնում:

Ինձ միշտ հետաքրքրել է նաև, թե ինչպես են մեր շրջանավարտները գործնականում կիրառում իրենց գիտելիքները: Եվ, անկեղծորեն, շատ-շատերը մեզ ուրախություն և հպարտություն են պարգևում. նման օրինակներ կան ե՛ւ առողջապահական համակարգում, ե՛ւ նախադպրոցական հաստատություններում, ե՛ւ մեր կյանքի ամենատարբեր ոլորտներում:

– Դասավանդող մասնագետները ցանկացած ուսումնական հաստատության հաջողությունների գլխավոր գրավականն են: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Քոլեջի ռազմավարական նպատակներից են կադրային ներուժի զարգացումը և դասախոսական կազմի համալրումը բարձր որակներ ունեցող մասնագետներով: Չնայած այն հանգամանքին, որ տարածաշրջանում մասնագետների սղություն, այնուամենայնիվ, առկա է: Քոլեջում դասավանդում են միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթությամբ՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ:

Բացի այդ, քոլեջը դասախոսների ընտրության հարցում որդեգրել է դասախոսական կազմը գործատուներով և իր իսկ շրջանավարտներով համալրելու քաղաքականություն: Եվ այսօր ունենք այդպիսի օրինակներ:

Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են մասնագիտական տարաբնույթ վերապատրաստումների:

Քոլեջն ամեն ինչ անում է և կանի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացն ապահովելու համար:

Կարևորում եմ նաև ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող բարեփոխումները, խոսքը պարտադիր ատեստավորման մասին է, որը, միանշանակ, միտված է դասախոսի մասնագիտական աճին ու առաջընթացին:

Կարող եմ ասել՝ Գորիսի պետական քոլեջում դասավանդում են մասնագիտական բարձր որակներ ունեցող մասնագետներ, ինչը թույլ է տալիս ապահովել մեր կրթօջախի բնականոն ընթացքը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
25 ՀՈՒԼԻՍԻ 2024 Թ.
SYUNIACYERKIR.AM

ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՍՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

Լիլիթ Մելքոնյանի հարցազրույցը Կարեն Լազարյանի հետ

Այսօր մեր տեսագրությունը կատարում ենք Հայաստանի ամենագեղեցիկ, ամենատարբերվող քաղաքներից մեկում՝ Գորիսում, որը հենց սկզբից նախագծված է եղել որպես քաղաք: Եվ այստեղ՝ 100 տարի շարունակ, Գորիսի պետական քոլեջը՝ ամենատարբեր անվանումներով, ժամանակին համահունչ փոփոխված, միշտ կարողացել է իր տեսակին ու կոչմանը հավատարիմ մնալ, շատ պրոֆեսիոնալ, տարբեր բնագավառներում շատ փնտրված մասնագետներ ճանապարհել դեպի աշխատաշուկա: Ժամանակները փոխվել են, և տպավորություն է, թե 100 տարի անց դժվար պիտի լինի նորից աշխատաշուկայում առաջինը լինել, մինչդեռ պարզվեց՝ այնքան էլ դժվար չէ: Գորիսի պետական քոլեջի մասին, ոչ միայն այս տարածաշրջանում, այլ առհասարակ կրթական բնագավառում, բավական դրվատանքով ու բավական տարբերվող ոճով են խոսում: Որովհետև ավարտելով, ուսուցանվող մասնագիտություններին տիրապետելով՝ առաջին հերթին կարողանում ես և՛ գործնական հմտություններ ձեռք բերել, և՛ ժամանակի ու պահանջված մասնագիտություններն իրականում դարձնել քոնը: Այսօր մենք Գորիսում ենք և ուզում ենք զրուցել Գորիսի պետական քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանի հետ...

Հարցազրույցի ամբողջական տարբերակը՝ L-ROOM-ի Youtube-յան էջում:

L-ROOM
30 ՀՈՒԼԻՍԻ 2024 Թ.

ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՍՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

Տեսաֆիլմ՝ նվիրված կրթօջախի հոբելյանին

Ոտ քսան որպե տևող տեսաֆիլմն առաջին անգամ կցուցադրվի կրթօջախի 100-ամյակին նվիրված հանդիսավոր ցերեկույթի ժամանակ:
Ստորև՝ մի քանի դրվագ տեսաֆիլմից: Քոլեջի ներկա ընթացքի մասին դիտարկումներ են անում, գնահատանքի և շնորհավորանքի խոսքեր հնչեցնում ՀՀ ԿԳՄՍ նախարարության վարչության պետ Արմենուհի Պողոսյանը, Գորիսի փոխհամայնքապետ Իրինա Յոլյանը, Գորիսի պետական քոլեջի դասախոս և Գորիսի բժշկական կենտրոնի փոխտնօրեն Լևոն Հարությունյանը, Գորիսի ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի տնօրեն Արտակ Ասոյանը, ծնողներ Աննա Հարությունյանը, Էդիկ Հայրապետյանը, Ալինա Մինասյանը, ուսանողներ: Ֆիլմում տեղ են գտել նաև քոլեջի ուսումնական պրոցեսը և ուսանողների առօրյան արտացոլող պատկերներ:
Ֆիլմը պատրաստվել է Geographic.tv «Գործարար Հայաստան հաղորդաշար»-ի կողմից:

Ալինա Մինասյան–ծնող

Աննա Հարությունյան–ծնող

Արմենուհի Պողոսյան

Արտակ Ասոյան

Էդիկ Հայրապետյան–ծնող

Իրինա Յոլյան

Լևոն Հարությունյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գորիսի պետական քոլեջի օրհներգը (խոսք՝ Տիգրան Գրիգորյանի, երաժշտ.՝ Անուշ Ալեքսանյանի) 2

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Արաքսիա Սվաջյան, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ 4

Կարեն Լազարյան, Գորիսի պետական քոլեջի տնօրեն 4

Սիսակ Գաբրիելյան, ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ 5

Առուշ Առուշանյան, Գորիս համայնքի ղեկավար 6

Դավիթ Դանիելյան, ՀՀ ԱԺ պատգամավոր 7

Տեր Մակար վարդապետ Հակոբյան, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ 7

Արարատ Լալաբեկյան, Գորիսի պետական քոլեջի կառավարման խորհրդի նախագահ 8

Օլգա Գալստյան, քոլեջի 91-ամյա շրջանավարտ 8

ԷՋԵՐ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քոլեջի տնօրենները 9

Գորիսի պետական քոլեջի նշանավոր շրջանավարտները 10

Շրջանավարտներ, ովքեր անուրանալի դերակատարություն ունեցան Գորիսի տարածաշրջանում և ընդհանրապես հանրապետությունում՝ գիտության, տնտեսության, մշակույթի, մանկավարժության ոլորտներում 12

Մի քանիսը՝ երախտավորներից 12

Պատմում են լուսանկարները 14

Եվս երեք հիշարժան դրվագ 17

Տեղեկություններ արխիվից 19

Քոլեջի մասնակցությունը Մեծ հայրենականին և Արցախյան հերոսամարտերին 20

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿՐԹՕՋԱԽՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Սովորելով Գորիսի պետական քոլեջում՝ շրջանավարտը ձեռք է բերում նախընտրած մասնագիտությանը համապատասխան նրբություններն ու աշխատաշուկայում տեղ գտնելու բոլոր հնարավորությունները 22

Ժամանակակից ուսումնական լաբորատորիաներ, նյութատեխնիկական բազայի համալրում 25

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ–ի 2024/25 ուստարվա մասնագիտությունների ցանկ 26

Քոլեջ–ուսանող–գործատու արդյունավետ շղթա 27

Ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ կարևոր առաջնահերթություն 28

Ուսանողական միջոցառումների շարքից 29

Արցախցի ուսանողները՝ ինտեգրման ճանապարհին 32

Տարեգրության սրահը՝ մեկդարյա ընթացքի և ավանդությունների պահեստարան 33

Քոլեջի գրադարանը՝ արդիականացման ուղիով 34

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈԼԵՋԻ ՄԱՍԻՆ

Բարեգործության և աջակցության շնորհիվ. միայն թվեր ու փաստեր (2009-2024 թթ.) 35

Պետական պաշտոնյաներ, ովքեր վերջին տարիներին այցելել են Գորիսի պետական քոլեջ 36

Կրթօջախը՝ պետական մարմինների ուշադրության կենտրոնում 37

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պատվիրակությունների այցելություններ Գորիսի պետական քոլեջ 38

ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

Գորիսի պետական քոլեջը տոնում է գործունեության փառահեղ հարյուրամյակը («Վարկանիշ» ամսագիր, N42, 2024թ.) 39

Գորիսի 100-ամյա քոլեջը՝ նոր ուսումնական տարվա շեմին (syuniacyerkir.am, 25 հուլիսի, 2024 թ.) 41

Լիլիթ Մելքոնյանի հարցազրույցը Կարեն Լազարյանի հետ 44

Տեսաֆիլմ՝ նվիրված կրթօջախի հոբելյանին 45

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Գրանցման վկայական՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 6 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 500: Ստորագրված է տպագրության 20.09.2024թ.:



ՍԻՍԱԿԱՆ ՏԱՆ ԲՈԼՈՐ
ՎԱՆՔԵՐԻ ԳԼՈՒԽ ԵՎ
ՇՆՈՐՀՅԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ
ԿՂԲՅՈՒՐ

ՏԱԹԵՎԸ